

ՊՐԱԽՈՍԼՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ ՌՈՒՍՊԱՏԱՆՈՒՄ

Վրաց եկեղեցի

Բնույթի լրագրում № 320 կարգում ենք. —

Սրբազն Սինօդը հրաժարուեց կաւկազում վրաց եկեղեցին ոչնչացնելուց։ Նախատեսւում էր վրաց էկզարիսութիւնը, որպէս ամբողջութիւն՝ ոչնչացնել վերածելով եպիսկոպոսութիւնների և ոռու թեմերի նման անմիջապէս Սինօդին ենթարկելով։ Այժմ, ինչպէս լսւում է, Սինօդը ցականում է պահպանել էկզարիսութիւնը ըստ առաջնոյն և հոգս է անում գտնել ռնահատակ» էկզարիս նիկոնին յաջորդ։

Սինօդի այս որոշ աստիճանի խաղաղասէր քաղաքականութեան յեղաշրջումը վրաց եկեղեցու վերաբերութեամբ անկարելի է չողջունել։ Սրանով գոնէ միառժամանակ հեռանում է գորդեան հանգոյցի լուծման ծանր վայրկեանը. հանգոյցի, որը խճճում էր երկու քոյր, ոռուսաց և վըրաց, եկեղեցիների իրար հետ ունեցած յարաբերութիւնը. Յամենայն գէպս յարձակողական քաղաքականութեան դադարեցումն վրաց եկեղեցու վերաբերութեամբ գեռթոյլ յոյսեր է տալիս կարգաւորելու երկու եկեղեցիների բարդ և վիճելի գործերը խաղաղ «եկեղեցական» ճանապարհով։

Վրաց եկեղեցին ինքն ըստ ինքեան շատ թանկ վկայ է քրիստոնէութիւնը խոստովանելու կամ ընդունելու համար, աւելի հնագոյն քրիստոնէութեան վկայ է քան ոռու եկեղեցին, վեց դար հնագոյն, և հեշտ չէր հանգիստ սըրտով վերջացնել նրա և լրութիւնը, և կազմը, և սովորութիւնները, և լեզուն և նոյն իսկ ժամերգութիւնը։ Մասնաւանդ որ վրաց եկեղեցին ունի իւր անկապտելի պատմական անցեալը, որը նրան ապրելու իրաւունք է տալիս Քրիստոնէութեան ե. դարից սկսած նա վրաց քաղաքական և կուլտուրական պատմութեան փառաւոր գործոններից մէկն է. նա է ստեղծել գիրն ու դպրութիւնը, նա է ստեղ-

ծել գրականութիւնը. նա է միացրել Վրաստանը նը-  
րան շրջապատող թշնամիների կատաղի յարձակումների  
դէմ նրա բազմագարեան մաքառումների ծանր վայր-  
կեաններին Երբ Ռուսիայում տիրում էր այն միտքը թէ,  
ուր մէջ կարգ չկայ և թէ պէտք է մի բան անել, հրաւիրել  
օտարերկրեայ իշխաններին, որ «իշխեն և տիրեն Ռուսիա-  
յին», գեռ այդ ժամանակ Վրաստանում և՛ Եկեղեցական,  
և՛ կուլտուրական և՛ պետական կեանքը եռում էր և ժո-  
ղովրդական հանճարներ էր արտադրում:

Երբ Ռուսիայում նրա առաջին գրադէտները «գժուա-  
րութեամբ մատը մի բառից միւսը տանելով» հազիւ էին  
հեգելով կարգում գրքերը, որ ուղարկում էր նրան հաւա-  
տակից Բոլգարիան, Վրաստանում գործում էին Եկեղեցա-  
կան ժողովների շրջանը և նրա Եկեղեցական ու աշխարհիկ  
գրականութեան ոսկի դարը (Թամարի շրջան): Իւր պատ-  
մական գոյութեան բոլոր շրջաններում վրաց Եկեղեցին  
ունեցել է կատարեալ ազատութիւն, կառավարուել է անկախ  
կաթուղիկոսներով (պատրիարք). ունեցել է օրէնսդրական  
հաստատութիւն, եղել են տեղական վրաց ժողովներ, ունեցել  
է իւր յատուկ Եկեղեցական ճարտարապետութիւնը, գեղա-  
րուեստը, Եկեղեցական երգեցողութիւնը, Եկեղեցական  
տօները և Եկեղեցական կեանքի այլ արտայայտութիւնները  
(պլոֆ. Մառ, տես նրա զեկուցումն «Պредсод. Пр.» ամսագ-  
րում հատ. Ա. Եր. 142): Վրաստանի սաստիկ անձուկ քա-  
զաքական դըրութիւնը ԺԷ. դարում հարկադրեց նրան ա-  
պաւինել ուստ պետութեան հօվանաւորութեանը, բայց  
վրաստանի Ռուսաստանի հետ քաղաքականապէս միացման  
հետ զուգընթացաբար սկսեց Սինօդի քաղաքականութիւնը  
վրաց Եկեղեցու անկախութեան վերաբերութեամբ: Թէն-  
ուս թագաւորները, յայտնի է, որ այդ չէին կամենում:  
— Զը դիպչել վրաց Եկեղեցու արտօնութիւններին գրում  
էր Պաւել I իւր բեսկրիպտում:

Բայց Սինօդի քաղաքականութեանը համակիր էին Կով-  
կասի ուստ գեներալները: Կովկասի գլխաւոր-Հրամանա-  
տար Տօրմասովի միջնորդութեամբ վրաց վերջին կաթու-

զիկոս Անտօն Ա կոչուեց Պետերբուրգ և այն տեղից էլ չը-  
վերադարձաւ, Նրա տեղ, նոյն Տօրմասովի խորհրդով Վլա-  
րաստանում նշանակուեց «պատրիարքական աթոռի վերա-  
հրակող» էկզարիք կոչմամբ:

Վրաստանի հոգեոր պետի նշանակովի լինելը սրբազան  
Սինօդից սկսուեց 1811 թուի յունիսի 30-ին, (առաջ վրաց  
եկեղեցին էր՝ ընտրում): Այս թուականից սկսում է վլ-  
րաց էկզարիխութեան պատմութիւնը: Էկզարիք նշանակում  
էին առաւելապէս ոռւս եպիսկոպոսներ, որոնք սինօդա-  
կան կարգերի հաւատարիմ գործադիրներն էին. ժամեր-  
գութեան մէջ վրացերէն լեզուի տեղ հետզհետէ բռնեց եկե-  
ղեցական—ոլաւօնական լեզուն, վրաց եկեղեցական սովո-  
րութիւնների տեղ բռնեցին ոռւսականները, վրացի ուսու-  
ցիչների տեղ—ոռւսներ և այլն: Վրացական եկեղեցին  
հետզհետէ կորցրեց իւր ժողովրդական նախնական կեր-  
պարանքը:

Վրացիները սկսեցին բողոքել իրանց, «Եկեղեցական  
անկախութիւնը» խանգարելու իրանց եկեղեցին ոռւսաց-  
նելու դէմ: Եւ շարունակում են բողոքել: Ստեղծուեց ոչ  
ցանկալի «Վրաց եկեղեցու անկախութեան» խճճուած խըն-  
դիրը: Այդ խնդրի վերջին ընթացքը այսպէս է. «Վրաստանի  
թագաւոր, համառուսական կայուր և այժմ թագաւորող  
նիկոլայ Բ. ուշադիր լինելով նախախնամութիւնից իւր  
հովանաւորութեան յանձնուած վրացի ժողովրդի կարիք-  
ներին, հրամայեց յայտնել վրաց էկզարիխութեան սրբա-  
զաններին, թէ եկեղեցական անկախութեան (աւտօկէֆա-  
լիա) խնդիրը յանձնուում է համառուսական տեղական ա-  
ռաջիկայ ժողովի քննադատութեանը» (Հյորհ. предсобор.  
որոշ. համ. — Խ. եր. 101): Դժբաղդաբար Սինօդի, ըն-  
թերցողներին արգէն յայտնի, քաղաքականութեան աւան-  
դութիւնները հետզհետէ ընդարձակ ծաւալ են ստանուած...

Եւ մենք այժմ համարեա կանգնած ենք դէմ առ դէմ  
վրացական եկեղեցու կացութեան կատարեալ լիկվիդա-  
ցիայի փաստի առաջ:

— Բատ մեզ, այնքան էլ մռայլ չէ վրաց եկեղեցու վի-

ճակը, ինչպէս նկարագրուած է այս տեղ. որովհետեւ վրաց էկզարխութեան վտանգը անցած է, և «Հօրիզոն»ում կարդում ենք որ «Վրաստանի էկզարխ է նշանակուած Տամբովի արքեպիսկոպոս Ինոկինոգիոսը, որ յայտնի է իւր անցեալ գործունէութեամբ իրքի մարդասէր և վերին աստիճանի կորրեկտ եկեղեցական, այս նշանակումը համարութիւն է զարթեցրել բարձր եկեղեցական շրջաններում»: Ինու կենդիս արքեպիսկոպոսը 47 տարեկան է:

— Հ Հ Հ —

### ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂ. ԱՐՏՈՒՐԱՀՄԱՆՈՒՄ

Թուրքիայի ծածուկ բրիստոնեաները կամ ստարիօտները: Յռնի մահմեդականացումն: Քրիստոնեաների զինւորագրութիւնն: Անտիոքի պատրիարքի թուղթը իւր բազմացեղ հօտին սիրոյ եւ հաշտ ապրելու համար: Յունաստանում եկեղեցական դանձարան հաստատուելը: Յունական թագաւորութեան բնակիչները բատ լեզուի եւ կրօնի:

(Պերք. Եկտ.)

Յոյն հասարակութիւնն ու լրագրութիւնը նորից վրդովուած են թուրքիայի գաղտնի քրիստոնեաների ծանր վիճակի առիթով: Հիմք ունենալով խզճի աղատութիւնը, որը սահմանադրութեան հետ հրատարակուեց թուրքիայում, և. Պօլսոյ յոյն պատրիարք Յովակիմ Գ.-ը դիմեց կառավարութեանը խնդրելով թոյլ տալ ստարիօտներին, որ իրաւունք ունենան ազատ գաւանել քրիստոնէական հաւատը: Փոքր-Ասիայի Քալդի (Խաղոտիք), Տրապիզոնի և Բոդոպօլի թեմերում ստարիօտներ անունով քրիստոնեաներ կան, որոնք ԺԶ. դարում մահմետական մոլեռանդութեան ազդցութեան և տաճիկ իշխանութեան ճնշման տակ ստիպուած եղան ընդունել մահմետականութիւն: Բայց, պաշտօնապէս մահմետական համարուելով հանդերձ, ստարիօտները շարունակեցին քրիստոնեայ մնալ: ունէին իրանց քահանաները, գիշերները, կամ Աղ—դաղ սարերում, կատարուած ծածուկ ժամերգութիւններին ներկայ էին լինում: մահմետական անուան հետ քրիստոնեայ անուններ էին կրում, պսակները, մկրտութիւնները, և թաղումները